



Բանավոր և գրավոր թարգմանիչները հոգեկան առողջության միջավայրում

1. Ի՞նչ տեղի կունենա, եթե իմ հոգեկան առողջության մատակարարը իմ լեզվով չի խոսում:

Դուք կարող եք բանավոր կամ գրավոր թարգմանիչ խնդրել: Սա պահանջվում է, որպեսզի Դուք ծառայությունից օգտվելու հավասար հնարավորություն ունենաք: Նման հնարավորությունից օգտվելու մերժումը խտրականություն է:

2. Ի՞նչ տարբերություն բանավոր և գրավոր թարգմանիչ միջև:

Բանավոր թարգմանիչը բանավոր ասված տեղեկությունը Ձեր լեզվից փոխակերպում է անգլերենի և հակառակը: Գրավոր թարգմանիչը գրավոր տեղեկությունն է Ձեր լեզվից փոխակերպում անգլերենի և հակառակը:

3. Ո՞վ պետք է ինձ բանավոր կամ գրավոր թարգմանիչ տրամադրի:

Հոգեկան առողջության խնամքի և՛ հանրային և՛ մասնավոր մատակարարների պետք է այն կատարեն, ներառյալ այն մատակարարները, որոնք վարչաշրջանի հետ պայմանագիր ունեն:

4. Բանավոր կամ գրավոր թարմանության ծառայությունն անվճար կլինի:

Այո:

5. Ո՞րն է բանավոր կամ գրավոր թարգմանիչ գտնելու լավագույն ձևը:

Ձեր մատակարարից թարգմանիչ խնդրեք: Դուք կարող եք բանավոր թարգմանիչ խնդրել Ձեր առաջին տեսակցությունը կազմակերպելիս: Մա կոգնի, որպեսզի Դուք վստահ լինեք, որ երբ տեղ հասնեք բանավոր թարգմանիչն այնտեղ կլինի:

Մատակարարը պետք է Ձեզ ասի, թե ինչպես Դուք կարող եք բանավոր կամ գրավոր թարգմանիչ գտնել: Այս տեղեկությունը պետք է ուղարկվի ընդունարան կամ գրասենյակ: Եթե Դուք Ձեր ցանկացածը չստանաք, Ձեր խնդրանքը գրավոր ձևակերպեք: Մեկ օրինակը Ձեր արխիվում պահեք: Հավելյալ տեղեկությունների համար տե՛ս ստորև ներկայացված 15-20 հարցերը:

6. Ո՞վ կարող է լինել գրավոր կամ բանավոր թարգմանիչը:

Բանավոր կամ գրավոր թարմանիչը պետք է սահուն տիրապետի անգլերենին և Ձեր հիմնական լեզվին: Բանավոր կամ գրավոր թարգմանիչը պետք է իմանա հոգեկան առողջությանը վերաբերող տերմինները և հասկացությունները, որոնք օգտագործվում են: Նա պետք է

տեղյակ լինի, թե հոգեկան առողջությունն ինչպես է ընկալվում Ձեր մշակույթում: Բանավոր կամ գրավոր թարգմանչին պետք է տեղեկացնել, որ նրա ստացած տեղեկությունները պետք է գաղտնի պահվեն:

7. Մատակարարը կարո՞ղ է պահանջել, որպեսզի ես գամ իմ սեփական բանավոր կամ գրավոր թարգմանչով:

Ոչ:

8. Իմ հոգեկան առողջությանը վերաբերող տվյալները տեղեկություններ պե՞տք է պարունակեն իմ՝ բանավոր կամ գրավոր թարգմանչի կարիքի վերաբերյալ:

Այո: Ձեր մատակարարը պետք է վավերացնի Ձեր նախընտրած լեզուն և այն, թե արդյոք Դուք բանավոր կամ գրավոր թարգմանչի կարիք ունեք:

9. Ե՞րբ ես գրավոր թարգմանչի իրավունք ունեմ:

Մատակարարը պետք է թարգմանի նյութեր, եթե Ձեր հիմնական լեզուն «սահմանային լեզու» (threshold language) է: Լեզվի «սահմանային լեզու» լինելը կախված է վարչաշրջանի այն մարդկանց թվից կամ տոկոսից, ովքեր օգտագործում են տվյալ լեզուն: Medi-Cal-ի հոգեկան առողջության համար (Medi-Cal Mental Health) «սահմանային լեզու» նշանակում է վարչաշրջանի 3000 շահառուների կամ շահառու բնակչության հինգ տոկոսի հիմնական լեզուն: Medi-Cal-ի հոգեկան առողջության սահմանային լեզուների համար տե՛ս հետևյալ հղումը (հոկտեմբեր 2011) .

<http://www.dmh.ca.gov/dmhdocs/docs/notices11/Enclosure2.pdf>

10. Ինչպե՞ս կարող եմ պարզել, թե արդյոք իմ լեզուն «սահմանային լեզու» է:

Դուք կարող եք զանգահարել Ձեր վարչաշրջանի հոգեկան առողջության բաժին (County Mental Health Department)՝ պարզելու, թե արդյոք Ձեր հիմնական լեզուն սահմանային լեզու է: Յուրաքանչյուր վարչաշրջան ունի Մտավոր առողջության անվճար թեժ գծի (Mental Health Access Line) հեռախոսահամար, որով Դուք կարող եք զանգահարել:

Վարչաշրջանի հոգեկան առողջության թեժ գծի հեռախոսահամարների տեղեկատուի համար՝ տե՛ս հետևյալ հղումը՝

<http://www.dmh.ca.gov/docs/CMHDA.pdf>

Այլ մասնավոր կամ հանրային առողջապահական ծրագրերը պետք է ունենան այդ տեղեկատվությունը: Դուք կարող եք այն խնդրել:

11. Ո՞ր գրառումները պետք է թարգմանվեն:

Վարչաշրջանի հոգեկան առողջության ծրագրերը (County Mental Health programs) պետք է թարգմանեն հետևյալ գրավոր տեղեկությունները սահմանային լեզուներում:

- Անդամի ծառայությունների ուղեցույց կամ բրոշյուր
- Ընդհանուր նամակագրություն
- Շահառուի խնդրի կարգավորման, դժգոհության կամ արդար լսման նյութերը
- Հարցումներ՝ շահառուի բավարարվածության վերաբերյալ
- Տեղեկացված համաձայնություն՝ դեղորայքի ձևաթղթի համար
- Գաղտնիություն և տեղեկությունների ձևաթղթի հրապարակում
- Հաճախորդների համար ծառայությունների կողմնորոշում
- Հոգեկան առողջությանը վերաբերող կրթական նյութեր
- Ապացույց, որ թարգմանված նյութերը բաժանված և օգտագործված են

Այլ մասնավոր և հանրային առողջապահական ծրագրեր ևս պետք է թարգմանեն այս փաստաթղթերը՝ համապատասխանելու նահանգային և դաշնային օրենքներին:

12. Կա՞ն այլ փաստաթղթեր, որոնք պետք է թարգմանվեն:

Այո: Համաձայն նահանգային օրենքի, ոչ կամավոր խնամքի համար պահվող մարդիկ պետք է ծանուցումներն ստանան իրենց հիմնական լեզվով: Նահանգային և դաշնային օրենքներին համապատասխանելու համար մատակարարները հնարավոր է ստիպված լինեն այլ փաստաթղթեր թարգմանել, որոնք ներառում , բայց չեն սահմանափակվում հետևյալով.

- Ծառայության դիմում
- Տվյալների հրապարակում
- Անհատականացված ծառայություն կամ բուժման ծրագրեր
- Խնամքից հետո կամ հիվանդանոցից դուրս գրման ծրագրեր
- Գործողության ծանուցումներ՝ ծառայությունների մատուցման և բողոքարկման իրավունքների վերաբերյալ

13. Ի՞նչ տեղի կունենա, եթե իմ մատակարարը մերժի թարգմանել իմ տվյալները:

Զթարգմանելը կարող է ոտնահարել դաշնային և/կամ նահանգային օրենք(ներ)ը: Ստորև տե՛ս հարց 15-ը: Ցանկացած դեպքում, մատակարարները պետք է առնվազն տրամադրեն բոլոր գրավոր տեղեկությունների բանավոր թարգմանությունը:

14. Ի՞նչ տեղի կունենա, եթե իմ իմ լեզուն «սահմանային լեզու» չէ. ես իրավունք կունենա՞մ փաստաթղթերս թարգմանել տալու:

Դեպքից դեպք տարբերվում է: Հոգեկան առողջության բուժման ոչ կամավոր ծանուցումները պետք է տրամադրվեն Ձեր հիմնական լեզվով: Մատակարարները կարող է ստիպված լինեն այլ փաստաթղթեր թարգմանել, ներառյալ նրանք, որոնք հիշատակվեցին վերևում՝ հարց 11-

ում և 12-ում: Օրենքի այս հատվածը դեռ մշակման փուլում է, այդ պատճառով մենք Ձեզ հստակ պատասխան չենք կարող տալ:

15. *Ի՞նչ տեղի կունենա, եթե իմ մատակարարը մերժի ինձ բանավոր կամ գրավոր թարգմանիչ տրամադրել:*

Ձեր մատակարարից գրավոր բացատրություն և մատակարարի՝ բանավոր և գրավոր թարգմանիչների վերաբերյալ քաղաքականությունների պատճենը խնդրեք: Հարցրեք մատակատարից դժգոհելու գործընթացի մասին: Դուք կարող եք արտաքին բողոք ներկայացնել նահանգային և դաշնային գործակալություններին: Դուք պետք է հաստատեք, թե արդյոք արտաքին բողոք ներկայացնելուց առաջ կարիք կա ներքին բողոք ներկայացնել:

16. *Ի՞նչ տարբերություն կա ներքին բողոքի, գանգատի և հայցի միջև:*

Ներքին բողոքն ուղղակիորեն ներկայացվում է մատակարարին: Գանգատը, սովորաբար, ներկայացվում է վարչական գործակալությանը, որը պատասխանատու է մատակարարի համար: Հայցը ներկայացվում է դատարան:

17. *Ի՞նչ տեղեկություններ պետք է ներառեմ բողոքի կամ գանգատի մեջ:*

Բողոքը կամ գանգատը պետք է ներառեն.

- Ձեր անունը, հասցեն, հեռախոսահամարը, ստորագրությունը և ամսաթիվը
- Մատակարարի անունը, հասցեն և հեռախոսը
- Ինչպես, ինչու և երբ է դեպքը տեղի ունեցել: Օրինակ՝ «2012թ. մայիսի 1-ին ինձ մերժեցին բանավոր թարգմանիչ տրամադրել: Հոգեբույժն

ասաց, որ ոչ մի բանավոր թարգմանիչ հասանելի չէ»: “I was denied an interpreter on May 1, 2012. The psychiatrist said that no interpreter was available.”)

Չմոռանաք մեկ օրինակ պահել Ձեր արխիվի համար: Ձեր մատակարարին գրավոր բողոք կամ գանգատ ներկայացնելը կարող է լինել ամենարագ ճանապարհն ստանալու այն, ինչ ուզում եք: Ստորև քննարկված նահանգային կամ դաշնային գործակալությանը ներկայացված գանգատը կարող է ավելի երկար ժամանակ պահանջել հետազոտելու համար: Եթե Ձեր մատակարարը անտեսում կամ մերժում է Ձեր խնդրանքը, մենք խրախուսում ենք Ձեզ գանգատը ներկայացնել նահանգային կամ դաշնային գործակալությանը՝ ստանալու այն, ինչ ցանկանում եք:

18. *Ո՞ր նահանգային գործակալությանը կարող եմ գանգատ ներկայացնել:*

Եթե Դուք զգում եք, որ Ձեր հոգեկան առողջության մատակարարը Ձեր հանդեպ խտրականություն է դրսևորել Ձեր ազգային պատկանելության պատճառով՝ Ձեզ բանավոր կամ գրավոր թարգմանության ծառայություններ չտրամադրելով, Դուք կարող եք գանգատ ներկայացնել Արդար աշխատանքի և կացարանի հարցերով բաժնին (DFEH, Department of Fair Employment and Housing): Այցելեք DFEH –ի առցանց էջը՝ www.dfeh.ca.gov հասցեով կամ գանգահարեք նրանց՝ (800) 884-1684 հեռախոսահամարով՝ գանգատ ներկայացնելու պայմանավորվածությունն ձեռք բերելու համար:

Առհասարակ, հանրային մատակարարի դեմ նահանգային գանգատը պետք է ներկայացնել Ձեր կողմից խտրական նկատված ցանկացած դեպքից սկսած 180 օրվա ընթացքում: Մասնավոր մատակարարի դեմ նահանգային գանգատը պետք է ներկայացվի խտրական գործողությունից սկսած մեկ տարվա ընթացքում: Եթե դուք ցանկանում եք գանգատ ներկայացնել, կարևոր է, որ Դուք կապվեք 20-րդ հարցում նշված դատապաշտպանների հետ, որքան հնարավոր է շուտ:

19. Ո՞ր դաշնային գործակալությանը կարող եմ գանգատ ներկայացնել:

Դուք կարող եք գանգատ ներկայացնել Քաղաքացիական իրավունքների դաշնային գրասենյակ (OCR, Office of Civil Rights): Այցելեք OCR-ի առցանց www.hhs.gov/ocr/civilrights/complaints հասցեով կամ գանգահարեք նրանց՝ (800) 368-1019 հեռախոսահամարով:

Ընդհանրապես, դաշնային գանգատը պետք է ներկայացնել Ձեր կողմից խտրական նկատված ցանկացած դեպքից սկսած 180 օրվա ընթացքում: OCR-ը կարող է երկարաձգել 180-օրյա ժամանակահատվածը, եթե Դուք կարողանաք «լավ պատճառ» (good cause) ցույց տալ: Կապվեք հարց 20-ում նշված դատապաշտպանների հետ՝ հավելյալ տեղեկություններ ստանալու համար:

20. Կա՞ն հասանելի դատապաշտպաններ՝ ինձ օգնելու համար:

Այո: Դուք կարող եք գանգահարել Ձեր Վարչաշրջանի հոգեկան առողջության բաժնի խնդիրներ ունեցող անձանց իրավունքների պաշտպանին (County Mental Health Patients' Rights Advocate): Տե՛ս հետևյալ հղումը՝ Վարչաշրջանի խնդիրներ ունեցող անձանց իրավունքների (County Patients' Rights) գրասենյակների ցանկի համար. http://www.disabilityrightsca.org/OPR/prd_directory.pdf
Դուք կարող եք նաև գանգահարել Disability Rights California՝ 1-800-776-5746 հեռախոսահամարով:

Մենք ցանկանում Ձեր կարծիքն իմանալ: Այս ամփոփաթերթը կարդալուց հետո խնդրում ենք կատարել այս կարճ հարցումը և մեզ արձագանքել:

Անգլերեն տարբերակ՝

<http://fs12.formsite.com/disabilityrightsca/form54/index.html>

Իսպաներեն տարբերակ՝

<http://fs12.formsite.com/disabilityrightsca/form55/index.html>

«Խարանը, խտրականությունը, կրճատման և զարգացման քաղաքականությունը՝ վերացնելու խտրականությունը» ծրագիրը (**APEDP, Stigma, Discrimination, Reduction and Advancing Policy to Eliminate Discrimination Program**), ֆինանսավորվում է ընտրողի կողմից հաստատված հոգեկան առողջության ծառայությունների ակտով (**Mental Health Services Act (Prop. 63)**) և կառավարվում է Կալիֆորնիայի հոգեկան առողջության ծառայությունների (**CaIMHSA, California Mental Health Services Authority**) մարմնի կողմից: Վարչաշրջանի **MHSA** ֆոնդերն աջակցում են **CaIMHSA**-ին՝ վարչաշրջանի կառավարման համակարգերի կազմակերպությանը, որն աշխատում է բարելավել հոգեկան առողջության արդյունքներն անհատների, ընտանիքների և համայնքների համար: **CaIMHSA**-ն ծառայություններ է մատուցում և ծրագրեր իրականացնում ողջ նահանգով մեկ՝ տարածաշրջանային և տեղական մակարդակով: Հավելյալ տեղեկությունների համար այցելե՛ք



WELLNESS • RECOVERY • RESILIENCE